«Կուբ Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծառայությունների մատուցման ՆԸ թիվ 0013 լիցենզիան վերաձևակերպելու մասին

2022-08-23

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 138 Ա
23.08.2022

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ի ներդրումային ծառայությունների մատուցման ՆԸ թիվ 0013 լիցենզիան վերաձևակերպելու մասին

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «իթ» կետով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 221-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, նրանց կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ի 124-րդ կետով, *հաշվի առնելով* այն, որ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն 29.06.2022թ., 11.07.2022թ., 15.07.2022թ., 02.08.2022թ. և 04.08.2022թ. դիմել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ իրեն տրամադրված ներդրումային ծառայությունների մատուցման ՆԸ թիվ 0013 լիցենզիան վերաձևակերպելու միջնորդությամբ, *հիմք ընդունելով* Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2022 թվականի օգոստոսի 19-ի թիվ 34 արձանագրություն)՝ Հայաստանի

Հ ա ն ր ա պ ե տ ո ւ թ յ ա ն կ ե ն տ ր ո ն ա կ ա ն բ ա ն կ ի խ ո ր հ ո ւ ր դ ը

Ո ր ո շ ո ւ մ է .

Վերաձևակերպել «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ի ներդրումային ծառայությունների մատուցման ՆԸ թիվ 0013 լիցենզիան՝ կապված լրացուցիչ ներդրումային ծառայությունների մատուցման հետ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

2022 թ. օգոստոսի 29, ք. Երևան